Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՎԱԾՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԱՆՏԻԿ ՇԻՐԱԿՈՒՄ

Հայոց հեթանոսական պանթեոնի ամենամեծարված և սիրված աստվածուհին Անահիտն է: Անահիտի պաշտամունքի ուսումնասիրման համար աղբյուր են հանդիսացել հայ և օտար պատմիչների թողած տեղեկությունները, ազգագրական և բանագիտական նյութեր, հնագիտական գտածոներ և այլն:

Բոլոր հետազոտողներն անդրադարձել են Անահիտին նվիրաբերվող երինջների վերաբերյալ Պլուտարքոսի այն հիշատակությանը, թե դրանք իրենց ճակատին ունեցել են *ջահաձև* նշան: Պլուտարքոսի հունարեն բնագրում, նշանի ձևը ցույց տալու համար օգտագործված է ***λάμπας, άδος*** *լամպադոս*[1] բառը, որն ունի *ճրագ, ջահ* իմաստները, նույն ***λάμπάς*** արմատից են կազմված *փայլող, ճառագող, չքնաղ* և *նշանավոր* բառերը[2]:

Պլուտարքոսի այս հիշատակության հայերեն թարգմանություններում, սկսած Ե. Թոմաճեանից[3] ***λάμπάς, άδος*** բառը թարգմանվել է *ջահ*: Հետագա ուսումնասիրողները թերևս չեն խորացել այս խնդրում և շարունակաբար կրկնել են նույն՝ *ջահ* թարգմանությունը: Պլուտարքոսի ռուսերեն թարգմանության մեջ **λάμπάς, άδος**-ը թարգմանված է ոչ թե *факел-ջահ* այլ *светоч-ճրագ*.[4] Հարցն առաջին հայացքից էական չէ, սակայն դրան կարևորություն է հաղորդում այն հանգամանքը, որ այս նշանն իր ձևով առանձին պետք է հանդես գար որպես Անահիտ աստվածուհու խորհրդանիշ: Այդ երկու առարկաները՝ ճրագը և ջահը, իրարից տարբերվում են ոչ միայն կառուցվածքով ու չափերով, այլև ձևով: Հայ և օտար աղբյուրների հաղորդումները հիմնականում տեղեկություններ են պարունակում Անահիտի մեծ սրբավայրերի, մեհյանների, արձանների մասին, սակայն բնական է, որ ողջ Հայոց աշխարհում դրանց թիվը մեծ չէր: Բնականաբար, այս տեսանկյունից կարևորվում է, թե հասարակ ժողովուրդը, ապրելով անտիկ ժամանակաշրջանի կենսակերպին բնորոշ խիստ ծիսականացված կյանքով, մշտապես հայցելով աստվածների հովանավորությունը, սիրաշահելով և զոհեր մատուցելով նրանց, պաշտամունքային խոշոր կենտրոններից հեռու ինչ խորհրդանիշերով կամ ինչի կերպարանքներով է պաշտել «մեր ազգի փառք ու կենսատու մեծ Անահիտ տիկնոջը»[5]:

Հավանական է, որ Անահիտը, լինելով հազարամյակների խորքից եկող Մեծ մոր պաշտամունքի տվյալ ժամանակաշրջանի կերպավորողը, Հայաստանի տարբեր տոհմացեղային ծագում ունեցող տարածաշրջաններում պիտի ունենար իրեն ներկայացնող խորհրդանիշերի բազմազանություն:

---

1 *Plutarch`s Lives. Luculus, III.8-IV.2, in eleven volume,II, Cambridge, Massachusetts Harvard University Press*

2 *В. Соколов, А. Козаржевский, Учебник древнегреческого языка, М. 1962, стр. 354*

3 *«Պլուտարքեայ Քերովնացւոյ Զուգակշեռք», հատ. Գ, թարգմ. Ե Թոմաճեան, Վենետիկ, 1833, էջ 562:*

4 *Плутарх, Избранные жизнеописания, т. 2, М., 1987, стр.134.*

5 *Ազարանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983, էջ 41:*

Պլուտարքոսի հաղորդման մեջ հիշված երինջների ճակատի նշանի ձևը ճշտելու բանալի է 1985թ. Արմավիրի պեղումներից հայտնաբերված կավե եղջերագավաթը[6] (նկար 1):

Ինչպես նշում է ակադեմիկոս Բ. Առաքելյանը.- «Ընդունված է եղջերագավաթները դիտել իբրև հանդիսավոր անոթներ, որոնք օգտագործվել են պաշտամունքային ծիսակատարությունների ժամանակ», իսկ թե որ աստվածություններին էին նվիրաբերվում դրանք, «հարցի պատասխանն, անշուշտ պետք է որոնել բուն եղջերագավաթների, մասնավորապես նրանց առաջամասերի ձևավորման մեջ»,- շարունակում է նա[7]:

Խնդրո առարկա եղջերագավաթը թվագրված է մ.թ.ա. 6-5 դարերով: Այն կավից է, պատրաստված է մեծ խնամքով, բավականին մեծ է, ունի 27,2 սմ երկարություն, փոքրի վերջավորության մասում 13,2 սմ տրամագիծ: Եղջերագավաթի առաջամասը իրենից ներկայացնում է մեծ արվեստով և բավականին իրատեսորեն քանդակված հորթի գլուխ: Կենդանու մատաղաշ լինելը հաստատում են փոքր եղջյուրները և կարճ դունչը: Հորթի վիզը զարդարված է վզնոցով, որի շուրջը եռանկյունիներից կազմված նախշազարդ է: Հորթի ճակատի կենտրոնում կա սուր անկյունը դեպի ներքև ուղղված հավասարասրուն եռանկյան պատկեր (նկ. 2): Եռանկյունուց ներքև ուղղահայաց առանցքի վրա երկու օղակներ են: Կրծքի մասում՝ կենտրոնում, հեղման անցքն է: Հեղում կատարելուց հետո եղջերագավաթները կոտրելու ծեսը փոխարինում էր սրբազան կենդանու զոհաբերությանը: Անկասկած, տվյալ եղջերագավաթը նվիրաբերված էր Անահիտ աստվածուհուն: Հնարավոր է, որ կավից պատրաստված նման եղջերագավաթներն օգտագործվել են այն դեպքերում, երբ տվյալ պահին համապատասխան նշաններ ունեցող զոհաբերման կենդանիներ չեն ունեցել: Եղջերագավաթի վրա գնդեցիկ վզնոցի առկայությունը հուշում է, որ հին Հայաստանում զոհաբերությունից առաջ կենդանին գեղեցիկ զարդարվում էր:

Եղջերագավաթի վրա եղած խորհրդանշաններից կենտրոնականը և մի քանի անգամ կրկնվողը եռանկյունին է: Պլուտարքոսի հաղորդման մեջ Անահիտին նվիրաբերված երինջների ճակատի նշանը, ինչպես վկայում է Արմավիրի եղջերագավաթը, եռանկյունին է: Սակայն հարց է առաջանում՝ ինչու՞ է պատմիչն այն ներկայացնում որպես ջահի կամ ճրագի ձև ունեցող, և ո՞րն է դրանցից ճիշտը:

Անտիկ աշխարհի ջահերն իրենց ձևով եռանկյան նման չեն, և ավելի հավանական է նմանեցումը ճրագի հետ: Հունահռոմեական աշխարհում լայն տարածում ունեցող ձիթաճրագները (տախտակ 1, նկ. 2-5) ընդհանուր գծերով նմանվում են եռանկյունու:

Անտիկ շրջանի Հայաստանից հայտնաբերված ճրագները օվալաձև կամ կլորավուն են: Դրանք պատրույգը կախելու համար ունեն փոքր քթիկ: Նման բազմաթիվ ձիթաճրագներ հայտնաբերվել են Հայաստանի բոլոր հնավայրերից: Խնդրո առարկա հարցի պարզաբանման համար բանալի է Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի պեղավայրից հայտնաբերված ձիթաճրագների մի խումբը: Դրանք եռանկյունաձև ճրագներն են, որոնք հայտնաբերվել են մ.թ.ա. 1-ին դարի երկրորդ կեսի շերտից և գոյություն են ունեցել կլորավուն և օվալաձև ձիթաճրագներին զուգահեռ (տախտակ 2): Դրանց թիվը մեծ չէ և կազմում է հայտնաբերված ճրագների ընդհանուր թվի մոտ 10%-ը: Նման ձիթաճրագներ Հայաստանի այլ հնավայրերից մեզ հայտնի չեն, բացառությամբ անտիկ Շիրակավանից և Հողմիկից հայտնաբերված համաժամանակյա մեկական բեկորների: Նման ամբողջական մի ձիթաճրագ կա Անիից[8], որը սակայն թվագրված չէ: Ինչպես տեսնում ենք, եռանկյունաձև ձիթաճրագները յու-

---

6 *I. Karapètian, Rhyton à tête de taureau, Trésors de l'Arménie ancienne / des origines au IV siècle/. Paris, 1996, p.175*

7 *Բ. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Եր., 1976, էջ 48:*

8 *Ե. Մուշեղյան, Հատկանշական ցուցակ բանգարանային ժողովածուների, պրակ II, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Եր., 1982, տախտակ XII, նկ.2:*

բահատուկ են անտիկ Շիրակին և առավել մեծ քանակությամբ (մոտ 20) հայտնաբերվել են Բենիամինի մ.թ.ա. I դարի երկրորդ կեսի կառույցներից և շերտից:

Բենիամինից հայտնաբերված եռանկյունաձև ճրագներն ունեն հավասարակողմ, կամ հավասարասրուն եռանկյան ձև: Դրանց մեծ մասը, ի տարբերություն ավանդական ձիթաճրագների, խնամքով հարդարված են, պատված կարմիր կամ դեղին անգոբով: Այրվածքի հետքերից կարելի է եզրակացնել, որ հավասարասրուն կողեր ունեցող մի քանի ճրագների պատրույգի համար օգտագործվել են բոլոր երեք անկյունները:

Բենիամինի հելլենիստական ժամանակաշրջանի մոնումենտալ կառույցին և դրա գործառական բնույթին մենք մանրամասնորեն անդրադարձել ենք «Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը» հոդվածում[9]: Նշենք միայն, որ, հաշվի առնելով առանձնահատկությունները, այնտեղից հայտնաբերված նյութերն ու ծիսապաշտամունքային բազմաթիվ իրողություններ, եկել ենք այն եզրակացության, որ այս կառույցը բազմագործառական բնույթ ունի և ծառայել է նաև որպես Անահտական տաճար: Մ.թ.ա. I դարի կեսերին անտիկ բնակավայրի այս մասում տեղի է ունեցել մեծ հրդեհ, որն այրել է մոնումենտալ կառույցն ու նրա այնուհետև դահլիճը: Ավերվելուց հետո շենքն այլևս չի վերականգնվել: Ըստ շերտագրական դիտարկումների՝ եռանկյունաձև ձիթաճրագները բնակավայրում սկսում են ի հայտ գալ հրդեհից հետո, երբ արդեն պաշտամունքային գործառույթ ունեցող շենքը չկար: Սրբավայրի ավերվելուց հետո պաշտամունքը Անահիտ աստվածուհու խորհրդանշանի, այն է՝ եռանկյունու տեսքով տեղափոխվում է բնակարան: Սակայն, բացի ձևից, իմաստային կապ պիտի լինի Անահիտ աստվածուհու և ճրագի՝ լույսի աղբյուրի, լուսատուի միջև: Թերևս հարցի պատասխանը պետք է փնտրել Անահիտ-Արտեմիս աղերսներում, որոնք ունեն շատ խորը արմատներ: Հայ մատենագրության մեջ Անահիտը և Արտեմիսը հաճախ նույնացվել են: Խնդիրը բավականին խորը ուսումնասիրած Կ. Մելիք-Փաշայանը, մեջբերելով Հ. Օրբելու, Ղ. Ալիշանի, Քրայցերի կարծիքները, գտնում է, «որ մեր Անահիտը, պարսկական Անահիտից չի ծագում, այլ հին արևելյան ընդհանուր ծագումով հանդերձ, տեղական աստվածուհի է, նրա պաշտամունքը ձևավորվել է շատ հնում Հայաստա-Ազգի երկրում՝ կրելով Փոքր Ասիայի ազդեցությունը»:[10] Այստեղից էլ՝ Արտեմիս ու Անահիտ աստվածուհիների ոչ միայն գործառական, այլև խորհրդանշային որոշակի ընդհանրությունները:

Արտեմիսի խորհրդանիշներից էր աղավնին: Բենիամինի անտիկ դաստակերտի դեռևս մ.թ.ա. V-II դդ. մոնումենտալ կառույցից հայտնաբերված ծիսական անոթների՝ աղավնու և հորթուկի կերպարանքով կավե առաջամասերի գյուտերը ցույց են տալիս, որ Արտեմիս-Անահիտի պաշտամունքն այստեղ ունի դարավոր արմատներ: Դրա վկայություններից պիտի համարել նաև Բենիամինի մ.թ.ա. I - մ.թ. I դդ. շերտերից հայտնաբերված եղջերվի պատկերներով զունազարդ անոթների բեկորները և եղջերվի պատկերով կնքադրոշմը: Սկսած աքեմենյան ժամանակաշրջանից, երբ գնալով մեծանում է իրանական ազդեցությունը հայկական հոգևոր և նյութական մշակույթի վրա, տեղի են ունենում որոշակի փոփոխություններ նաև հայկական պանթեոնում, սակայն շատ

---

9 *Հ. Խաչատրյան, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը, (մասն երկրորդ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 1999, էջ 58:*

10 *Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 88:*

աստվածություններ ու իրողություններ, ձեռք բերելով նոր անուններ, գործառույթներ և ծիսապաշտամունքային արարողակարգ, պահպանում են նախկին խորհրդանշանային համակարգի հետ իմաստաբանական կապը: Այս տեսանկյունից հետաքրքիր է Կ. Մելիք-Փաշայանի կատարած մեջբերումը Մատենադարանի թիվ 2679 ձեռագրից. «Տրդատ յառաջին ամի ետ նուէրս Անահտայ *Կապուտակ* երինջ ի գեղն Երիզայ»:[11] *Կապույտ, կապուտակ* բառն ունի իրանական ծագում և կապույտ գույն իմաստից բացի կրում է *աղավնի, աղավնագույն* իմաստները:[12] Ինչպես տեսնում ենք, ժամանակի ընթացքում Արտեմիս-Անահիտի խորհրդանիշերից մեկը հանդիսացող աղավնին, աստիճանաբար տեղը զիջելով երինջին, անհետ չի մոռացվում, և աղավնագույնը դառնում է Անահիտին նվիրաբերվող կենդանիների գույնի պարտադիր պայման: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Շիրակում, մասնավորապես Դյումրու Սուրբ Աստվածածին եկեղեցում (Տիրամորը անունը կրող եկեղեցիների մեծ մասը կառուցվել են անահտական սրբավայրերում) դեռևս գոյություն ունի աղավնու զոհաբերություն, որ իրականացվում է երկու եղանակով՝ զոհաբերություն և թռչնի ազատ արձակում (ազատ մատաղ):

Արտեմիս-Անահիտ աղերսների դրսևորումներից է նաև Դերսիմում պահպանված մի ավանդություն, ուր «Անահիտը պատկերվում է կարապի կերպարանքով, որը լողում է Կարան կոլի լճում»[13]:

Է. Պետրոսյանը, բազմակողմանի և մանրամասն դիտարկելով Արտեմիս-Անահիտ աղերսները, բացահայտելով հայոց մեջ Արտեմիսի պաշտամունքի վերապրուկները, այդ պաշտամունքին վերաբերող նյութական, գունային, բուսական և այլ բանաձևային կաղապարները, համոզիչ կերպով ցույց է տալիս նրանց պաշտամունքային կապը լուսնի, սպիտակի, արծաթագույնի, լուսավորի, լույսի, կարապի հետ: Մասնավորապես դրա մասին են վկայում նաև այս աստվածուհիների *լույս, լուսաբեր, լուսակալ* (ջահակիր կամ լուսարար Արտեմիս) տիտղոսները[14]:

Այդպիսով, բացահայտվում է եռանկյունաձև ճրագների կապը և դերը Անահիտ աստվածուհու պաշտամունքում: Այս ճրագները, ունենալով Անահիտ աստվածուհու երկրաչափական խորհրդանիշի ձևը՝ եռանկյունի, միաժամանակ արտացոլում են նրա *լուսաբեր, լուսակալ* բնույթը: Նաև հունական աշխարհում Անահիտի պաշտամունքի տարածվածության մասին է մատնանշում Ագաթանգեղոսը, նշելով, որ նրան «... բոլոր թագավորներն են պաշտում, մանավանդ հունաց թագավորը»[15]:

Անահիտ-Արտեմիս-երինջ-եռանկյունի-ճրագ շղթան միասնականորեն է հանդես գալիս Իլուրատից (Բոսֆորի թագավորություն) հայտնաբերված, մ. թ. սկզբներով թվագրվող կավե մի փոքրիկ արձանախմբում (տախտակ 2, նկ. 1)[16]: Հայտնի է, որ անտիկ ժամանակաշրջանում Հայաստանը տնտեսական, առևտրական և մշակութային սերտ կապերի մեջ էր ինչպես փոքրասիական պետությունների և ժողովուրդների, այնպես և սևծովյան հունական կենտրոնների հետ: Առանձնակի կարևորություն ուներ հայ-պոնտական համագործակցությունը, որն իր գագաթնակետին հասավ Տիգրան Մեծի ժամանակ, երբ Պոնտական թագավորության կազմում էր նաև Բոսֆորի թագավորությունը: Այս շրջանում, բացի ռազմական և տնտեսական համագործակցությունից, դինաստիական-ամուսնական կապերի առկայության պայմաններում ավելի ակտիվ պիտի լինեին կրոնական և պաշտամունքային իրողությունների փոխներթափանցումները: Հայաստանի և սևծովյան ավազանի կապերի հետագայում ևս շարունակական բնույթի վկայությունն է Մայկոպի մոտ հայտնաբերված «Բակուր թագավորից» մակագրությամբ արծաթյա թասը: «Ուսումնասիրողները ոչ առանց հիմքի ընծայաբերին նույնացնում են հայկական Բակուր II թագավորի հետ, որը գահակալել է մ.թ. 161-163 թ.թ.»[17]:

---

11 *Կ. Մելիք – Փաշայան, նույն տեղում, էջ 92:*

12 *Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատոր Բ, Եր., 1973, էջ 526:*

13 *Կ. Մելիք – Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 155:*

14 *Э. Петросян, Боги и ритуалы древней Армении, Ер., 2004, стр.134- 135.*

15 *Ագաթանգեղոս, նույն տեղում:*

16 *Археология СССР, Античные города северного Причерноморья, М., 1984, табл. CXVII, рис. 26.*

17 *Բ. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Եր., 1976թ.*

ՏԱԽՏԱԿ II



Իլուրատի արձանախմբում ներկայացված են խոշոր եղջերավոր կենդանի (հավանաբար կով) և նրան ուղեկցող մարդը: Արձանախումբը ներկայացնում է կենդանուն զոհաբերության տանելու տեսարան: Առանձնահատուկ ուշադրության է արժանի ուղեկցողի գլխի վրա դրված եռանկյունաձև ձիթաճրագը, որով բացահայտվում է ոչ միայն արարողության ծիսական բնույթը, այլև հստակորեն ներկայացվում, թե որ աստվածության համար է կատարվում զոհաբերությունը:
Մեր կարծիքով, այս արձանախմբով ներկայացված է Անահիտին կատարվող զոհաբերության ծիսական տեսարան, ինչը հաստատող կովաններ են զոհաբերվող կենդանին, որ կով է կամ երինջ և եռանկյունաձև ձիթաճրագը:

Վերադառնալով Արմավիրի եղջերազավաթի վրա եռանկյունու տակ պատկերված օղակներին՝ նշենք, որ նույն խորհրդանիշները Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի պեղավայրում հանդես են գալիս տարբեր նյութերից. կավից օղակների տեսքով, որոնց ծիսական բնույթին անդրադարձել ենք վերոնշյալ հոդվածում[18], և քարե կոթողի վրա[19] (նկ. 3): Այս ամենը թույլ է տալիս եզրակացնելու.



1. Պլուտարքոսի հաղորդման մեջ Անահիտին զոհաբերվող երինջների ճակատի աստվածային նշանը եռանկյունին է, ուստի հետագայում տվյալ հատվածի թարգմանություններում ավելի ճիշտ կլինի *ջահածև* -ի փոխարեն օգտագործել *ճրագածև* բառը:

2. Շիրակի անտիկ հնավայրերից (Բենիամինի անտիկ դաստակերտ, Հողմիկ, Շիրակավան, Անի) հայտնաբերված եռանկյունաձև ձիթաճրագները Շիրակում Անահիտ դիցուհու պաշտամունքի յուրահատուկ դրսևորումներ են:

3. Բենիամինի անտիկ դաստակերտը ելել է ոչ միայն վարչական այլև Անահիտ դիցուհու պաշտամունքի կենտրոն: Այստեղ Անահիտի պաշտամունքը կրել է պաշտոնական բնույթ, ինչի ապացույցներն են մ.թ.ա. V-II դդ. մոնումենտալ կառույցից հատնաբերված Անահիտի խորհրդանիշները, մ.թ.ա. I դարի մոնումենտալ կառույցի ճարտարապետական մանրամասները և այնտեղից հայտնաբերված ծիսապաշտամունքային իրողություններն ու զոհաբերությունները, ինչպես նաև նշված երկու կառույցների գոյության ավարտին հաջորդող ժամանակաշրջանում եռանկյունաձև ձիթաճրագների ի հայտ գալն ու գոյատևումը:

ОБ ОДНОМ ПРОЯВЛЕНИИ КУЛЬТА БОГИНИ АНАИТ В АНТИЧНОМ ШИРАКЕ

___ *Резюме* ___ ___ *А. Хачатрян* ___

Из помещений и слоя 2-ой половины 1-го века до н.э. античного поселения Бениамин найдены керамические светильники треугольной формы, которые бытовали наряду с традиционными. Сопоставление этой формы со знаком треугольника на лбу протомы нетеля ритона, рассмотрение функций и атрибутов культов Анаит и Артемиды выявляют много совпадений и показывают, что эти светильники являются ритуальным инвентарем и посвящены богине Анаит. В виде треугольных светильников в Шираке проявляется ранее неизвестный атрибут культа богини Анаит. Раскопки двух монументальных зданий античного Бениамина показывают, что это поселение, являясь административным центром, одновременно имело функцию официального культа богини Анаит в Шираке.

---

18 *Տես Հ. Խաչատրյան, նշվ. աշխ.:*

19 *Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Նորահայտ կոթող և կոթողներ Շիրակից, «Հաբաստանի հնագույն մշակույթը», 3, Տեղեկագիր Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2003, էջ 124:*